«ԿԱՆԹԵՂ» ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «ՏՀՏ-ի կիրառումը անգլերենի դասավանդման ընթացքում»

ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտի հիմնական դպրոցի ուսուցչուհի՝ Ս. Արշակունի

2023թ.

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1. ՏՀՏ-ների կիրառումը անգլերենի դասերին 6

Գլուխ 2. Տեղեկատվական տեխնոլոգիաների դերը դասապրոցեսում 9

Գլուխ3. ՏՀՏ գործիքները՝ որպես ուսումնական գործընթացի արդյունավետությունը բարձրացնող միջոցներ 13

Եզրակացություն 17

Օգտագործված գրականության ցանկ 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր օրերում ամենաարժեքավոր ռեսուրսը տեղեկատվությունն է, իսկ ամենաանփոխարինելին ժամանակը, որը շատերիս մոտ պակասում է, ուսուցչի աշխատանքում նույնպես: Ուսուցման պրոցեսը, ինչպես գիտենք պետք է կատարվի սահմանափակ ժամանակում, սակայն պահանջում է գիտելիքների յուրացման հնարավորինս բարձր մակարդակ, կարողությունների և հմտությունների ճշգրիտ ձևավորում: Անգլերենը մեր կյանքում ամենուր է՝ սկսած մեր առօրյայից, վերջացրած տարբեր գիտություններով ու բնագավառներով: ՏՀՏ-ի կարևորությունը գիտակցելով յուրաքանչյուր ուսուցիչ փորձում է անգլերենի դասապրոցեսի համար հատկացված 45 րոպեն օգտագործել հնարավորիս արդյունավետ: Արդյունավետությունը բարձրացնելու համար նախապես պլանավորում ենք դասը, շատ դեպքերում օգտագործում ենք դասամիջոցը՝ գրատախտակին պատրաստի նյութեր, պաստառներ ցուցադրելով: Անգլերենի դասերին մտքի ծանրաբեռնվածությունը ստիպում է մտածել թե ինչ անել, որպեսզի սովորողների հետաքրքրությունը չկորչի, և պահպանվի ակտիվությունը ամբողջ դասի ընթացքում: Այդ իսկ պատճառով պետք է ներդնել նոր արդյունավետ ուսումնական մեթոդներ և այնպիսի մեթոդական հնարքներ, որոնք կակտիվացնեն դպրոցականների ուղեղի աշխատանքը, կխթանեն աշակերտներին, որպեսզի նրանք ինքնուրույն փորձեն ձեռք բերել նոր գիտելիքներ: Ուստի դասն ավելի հետաքրքրաշարժ դարձնելու համար մեզ օգնության են գալիս տեղեկատվական տեխնոլոգիաները, որոնք մեծ դեր կարող են կատարել դասապրոցեսում: Նորագույն տեխնոլոգիաների կիրառումը դասապրոցեսում կրկնակի, եռակի աշխատանք է ուսուցչի համար: Անգլերենի նկատմամբ հետաքրքրությունը սովորողների մեծամասնության մոտ կախված է նրանից, թե ինչ արդյունավետ մեթոդներով է ընթանում ուսուցման գործընթացը: Անհրաժեշտ է մտածել բոլոր աշակերտների ներգրավածությունը ապահովելու մասին և օգտագործել այն որպես մեկնարկային կետ հետաքրքրության առաջացման և զարգացման համար, խորացնել ճանաչողական հետաքրքրությունը: Անգլերենի համամարդկային և մարդկային

քաղաքակրթության լեզուն է և այն թափանցել է մարդկային կյանքի բոլոր ոլորտները: Իսկ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները ավելի հեշտ են տրվում, երբ այն ուսումնասիրողը ունի բավարար լեզվական/անգլերենի/գիտելիքներ: Որպեսզի աշակերտները լավ տիրապետեն անգլերենին,անհրաժեշտ է շատ լրջորեն վերաբերել յուրաքանչյուր թեմայի ուսուցմանը, աշակերտների գիտելիքների համակարգմանը, ամրապնդմանը, ընդհանրացմանը և գնահատմանը: Դասապրոցեսում կիրառելով ՏՀՏ-երը կարելի է լավագույնս համադրել դասավանդման այս կամ այն մեթոդի հետ եւ ստանալ փայլուն արդյունք: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը հնարավորություն է տալիս բարձրացնել գիտելիքների որակը: Այս ամենը հնարավոր և անհրաժեշտ է սովորել անգլերենի դասաժամերին: Համակարգչային տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը ուսուցման մեջ կրթական գործընթացի զարգացման կայուն ուղղություններից մեկն է: Համակարգչային տեխնոլոգիաների կիրառությունը հնարավորություն է տալիս ձևափոխել դասավանդման գործընթացը, կատարելագործել սովորողների ինքնապատրաստվածությունը:

ՏՀՏ կիրառությունը ուսումնական և դաստիարակչական գործընթացներում բարձրացնում է սովորողների հետաքրքրությունը ուսման նկատմամբ և գործընթացը դարձնում հետաքրքրական ու մտապահվող:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Պայմանավորված կրթական ոլորտում իրականացվող բարեփոխումներով՝ օրապահանջ է դասին ՏՀՏ գործիքների շարունակական կիրառումը: Հենց այս կարևորագույն հանգամանքով էլ պայմանավորել են սույն ուսումնասիրության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրել անգլերեն լեզվի դասավանդման շրջանակներում ՏՀՏ գործիքների կիրառության արդյունավետությունն ու դրանց ազդեցությունը սովորողների առաջադիմության, համակողմանի զարգացման վրա:

Հետազոտության խնդիրը: Կարևորել անգլերենի դասընթացի շրջանակենրում ՏՀՏ գործիքների կիրառման անհրաժեշտությունը, ցույց տալ դրանց զարգացնող ու մոտիվացնող նշանակությունը:

Գլուխ 1. Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը անգլերենի դասերին

ՏՀՏ-ների սրընթաց զարգացումն արդի ժամանակաշրջանում բնականաբար նոր պահանջներ է դրել նաև կրթական համակարգերի առջև ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում: ՏՀՏ-ները դարձել են որակյալ և արդիական կրթության հրամայական ու ուսուցման նորարարական գործիք: Ժամանակակից կրթական համակարգերում դրանք անչափ գործունակ միջոց են, որոնք խթանում են ստեղծագործ մտածողությունը, օգնում են սովորողներին ակտիվորեն ընդգրկվել ուսումնական գործընթացում, խորացնել ուսուցանվող նյութի իմացությունը, հասնել դպրոցական առարկաների առավել ընդգրկուն ընկալմանը, բարձրացնել առաջադիմությունը և հետաքրքրվածությունը, ստանալ անձնական պահանջմունքներին ավելի համապատասխան գիտելիքներ, ինչպես նաև կիրառել ժամանակակից ուսուցման, գնահատման ու ինքնագնահատման մեթոդներ: Դրանք նպաստում են մանկավարժների աշխատանքի որակի բարձրացմանը, նրանց մասնագիտական գիտելիքների ու ՏՀՏ հմտությունների զարգացմանը:

ՏՀՏ-ները հնարավորություն են ընձեռում մուտք գործել մի հրապուրիչ ուսուցողական միջավայր, որտեղ հասանելի են գրեթե անսահմանափակ քանակությամբ բազմազան նյութեր ու տեղեկություններ, և ամենակարևորը՝ գիտելիքի ձեռք բերման նպատակով ընդլայնել ուսումնական ծրագրերի ու դասագրքերի շրջանակները, փոփոխել հին մոտեցումները, առաջադրել և իրագործել բոլորովին այլ՝ որակապես նոր խնդիրներ:

ՏՀՏ-ներն ունեն նորարարության զարգացումն արագացնելու, սովորողների գիտելիքները հարստացնելու ու խորացնելու, հմտությունները զարգացնելու, ինչպես նաև նրանց մոտիվացիան բարձրացնելու և ուսման մեջ արդյունավետ ներգրավելու ներուժ: Դրանք բարելավում և կատարելագործում են ուսումնական գործընթացը և օգնում դպրոցներին վերափոխել: Էլեկտրոնային ուսուցումը կրթական գործընթացի կազմակերպումն է ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ: Էլեկտրոնային ուսուցումը կարող է շոշափելիորեն

ավելացնել սովորողների գիտելիքները, որի միջոցով մասնակիցները գործնական փորձ ու գիտելիք են ստանում համացանցից:

Այդ ամենին զուգընթաց կրթական գործընթացի արդյունավետության բարձրացման համար ուսուցման մեթոդների արդիականացման անհրաժեշտությունը ունի առաջնային կարևորություն:

Ըստ իմ տեսանկյան, նման մեթոդներից է հանդիսանում որպես անգլերենի ուսուցման, պատրաստվածության և հսկողության միջոց պարապմունքներին տեղեկատվական համակարգչային միջոցների կիրառությունը:

Համակարգչային տեխնոլոգիաները հնարավոր է կիրառել նոր նյութի բացատրման, տարբեր խնդիրների լուծումները պրոյեկտորով արտապատկերման, տնային առաջադրանքի պատրաստման, ինչպես նաև ունակությունների, հմտությունների և գիտելիքների մշակման դեպքում:

Կարելի է խոսել նաև նրա մասին, որ հնարավոր է կիրառել համակարգիչը նաև հեռահար ռեժիմում, օրինակ՝ սովորողների հետազոտական և նախագծային գործունեության դեպքում: Համակարգչային ռեսուրսները կարող են կիրառվել նաև որպես ուսումնական նյութի աղբյուր. էլեկտրոնային դասագրքեր, խնդիրներ, թեստեր, ընդ որում այս կատեգորիայում կարելի է ներառել նաև համացանցային ռեսուսները և էլեկտրոնային գրադարանները: Ժամանակակից աշխարհում բարդ է պատկերացնել մեր կյանքը առանց տեխնիկայի:

Համակարգիչները բավական դյուրինացնում են աշխատանքը:Ուսուցչի աշխատանքը անմիջական կապված է համակարգչի հետ: Համացանցում շատ նյութեր կան մաթեմատիկայի վերաբերյալ, որոնց օգնությամբ նյութը կարելի է ներկայացնել ավելի հետաքրքիր ու հաճելի աշակերտների համար:

Տեքստային խմբագրիչների օգնությամբ կազմվում են ստուգողական և ինքնուրույն աշխատանքներ, աշխատանքային պլաններ և պարապմունքի մշակումներ: Նոր նյութի բացատրության ժամանակ հնարավոր է այն ներկայացնել PowerPoint ծրագրի միջավայրում ստեղծված միջոցներով, վերջինս հնարավորություն է տալիս սովորողներին դիտարկելի

ձևով ներկայացնել նյութը: Նյութի դիտարկելի ներկայացումը բարձրացնում է դրա յուրացումը: Դա հնարավորություն է ընձեռում դյուրինացնել մտապահումը, ակտիվացնում է սովորողների ընկալումը, նպաստում ուշադրության բարձրացմանը, նվազեցնում հոգնածությունը: Դիդակտիկ ճիշտ մոտեցման դեպքում համակարգիչը ակտիվացնում է սովորողների ուշադրությունը, զարգացնում իմացական գործընթացները,մտածողությունը:

Անչափ հետաքրքիր է անգլերենի դասերին ՏՀՏ-ների միջոցով տարբեր գործիքների կիրառումը, օրինակ՝ ծրագրերի միջոցով թեստերի ստեղծումը և ձևափոխությունները, խաչբառները, վիկտորինաները և այլն, և այդ ամենը համակարգիչի միջոցով է ստեղծվում, ձևավորվում և ցուցադրվում: Կարևոր է նաև երեխաների ներգրավածությունը այս ամենին, հանձնարարելով նրանց նույնպես ստանալ այդ ամենը ինքնուրույն աշխատանքների միջոցով, որը ոգևորիչ խթան է ուսումնական գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու համար:

Այսպիսով կարող ենք ասել՝ ՏՀՏ-ի հնարավորությունները բազմազան են և հետաքրքիր: Միայն թե անհրաժեշտ է տիրապետել և կիրառել դրանք:

ԳԼՈՒԽ 2. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՐԸ ԴԱՍԱՊՐՈՑԵՍՈՒՄ

Անգլերենը այսօր մարդկային քաղաքակրթության լեզուն է և այն թափանցել է մարդկային կյանքի բոլոր ոլորտները: Իսկ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները ավելի հեշտ են տրվում եթե սովորողը ունի բավարար լեզվական գիտելիքներ: Որպեսզի աշակերտները լավ տիրապետեն անգլերեն լեզվին անհրաժեշտ է շատ լրջորեն վերաբերել յուրաքանչյուր թեմայի ուսուցմանը, աշակերտների գիտելիքների համակարգմանը, ամրապնդմանը,ընդհանրացմանը և գնահատմանը: Այսօր սովորողներից շատերը մեծ հետաքրքրությամբ են ուսումնասիրում բջջային հեռախոսների նոր հնարավորություններն ու շատ արագ էլ յուրացնում այն: Շատերն են տիրապետում Word, Excel, PowerPoint ….և այլ ծրագրերի, բայց կան նաև այնպիսիք, ովքեր համակարգիչը օգտագործում են միայն խաղերի ու այլ ժամանցային (վնասակար, զոմբիացնող) հետաքրքրությունների համար:

Ուսուցչի դերն այստեղ ուղղորդելն է, ճիշտ ճանապարհ ցույց տալը և աշակերտներին կողմնորոշել ինֆորմացիայի գլխապտույտ հոսքում: Աշակերտները կարող են նաև ինքնուրույն ստեղծել օրվա դասի թեմային վերաբերող ցուցադրական նյութեր: Դա կօգնի նրանց ավելի լավ յուրացնել տվյալ թեման, համակարգել ստացած գիտելիքները, ինչպես նաև կզարգացնի ստեղծագործական միտքը: Աշակերտներին ներգրավելով նման աշխատանքներում՝ ուսուցիչը կկարողանա հետաքրքրություն առաջացնել ուսման նկատմամբ: Միշտ էլ աշխատանքը համակարգչի հետ շատ հետաքրքիր է:

Տեղեկատվական տեխնոլոգիաները մեծ դեր կարող են կատարել դասապրոցեսում: Նորագույն տեխնոլոգիաների կիրառումը դասապրոցեսում կրկնակի, եռակի աշխատանք է ուսուցչի համար: Ուսուցիչը պետք է նախօրոք ՏՀՏ գործիքներով պատրաստի պաշարներ / դաս, թեստեր, վարժություններ, խաղեր և այլն/, որոնք աշխատատար և ժամանակատար են, որին շատ ուսուցիչներ չեն տիրապետում:

Քանի որ համակարգչային տեխնիկայի միջոցով պատրաստված դասերը սովորական դասերից ավելի տպավորիչ են, ուստի սովորողներն ավելի մեծ հետաքրքրությամբ են յուրացնում ուսումնական նյութը:

ՏՀՏ գործիքներով ուսուցումը կազմակերպելու համար անհրաժեշտ են հետևյալ պայմանները.

- ✓ դասավանդողի և սովորողի համար՝ համակարգիչների և ցանցի առկայություն,
- ✓ դասավանդողի համար՝ դասընթաց մշակելու կարողություն, վարելու հմտություն,
- ✓ սովորողի համար՝ համակարգչից օգտվելու կարողություն:

Համացանցում կան շատ նյութեր անգլերենի վերաբերյալ, որոնց օգնությամբ կարելի է առօրյա միապաղաղ դասերը դարձնել ավելի հետաքրքիր ու հաճելի աշակերտների համար:

ՏՀՏ-ները ուսուցչի համար անփոխարինելի են որպես գիտելիքների աղբյուր և գործիք, որոնցով կարելի է կառուցել դասը: Դպրոցում ՏՀՏ-ների կիրառման շրջանակները լայն են: Դրանք կիրառվում են համադպրոցական, ինքնուրույն աշխատանքներ, թիմային աշխատանքներ, մրցույթներ կազմակերպելու համար, ստեղծագործական նախագծերի մշակման և ներկայացման, ցուցադրումների համար:

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը ուսումնական գործընթացում լրացուցիչ հնարավորություն է սովորողների ուսուցման որակը բարելավելու համար: Այդ տեխնոլոգիաները և կրթական առցանց հարթակները կարող են ուսուցչին օգնել ավելի արդյունավետ լուծել հետևյալ խնդիրները.

- սովորողների ինքնուրույնության խթանում, աջակցություն նրանց անհատականության զարգացմանը,
- անհրաժեշտության դեպքում հեռավար կրթության կազմակերպում,
- սովորողների կրթական կարիքների առավելագույն բավարարում,
- գիտելիքի անկախ ձեռքբերման և փոխանցման գործընթացի արդյունավետության բարձրացում,
- սովորողների ՏՀՏ կարողությունների ձևավորում,
- ուսումնական գործընթացում ՏՀՏ-ի օգտագործման

- տեխնոլոգիաների կատարելագործում,
- սովորողների պատկերավոր մտածողության զարգացում,
- մեդիագրագիտություն, համացանցից օգտվելու կանոնների յուրացում:

Անգլերեն լեզվի ուսուցման նպատակներն են՝

- Հաղորդակցական կարողությունների զարգացում:
- Ուսումնասիրվող լեզվի մշակույթի, պատմության, աշխարհագրության, սովորույթների, ավանդույթների իմացություն:
- Սովորողների մոտ սեփական երկրի և այլ ազգերի մշակույթների հանդեպ հարգանքի ձևավորում:
- Ինքնակրթությամբ Անգլերեն լեզվի ուսուցման խնդիրներեն՝
- Զարգացնել սովորողների լեզվական խոսքային, հանրամշակութային, գործաբանական, փոխհատուցման, ուսումնաճանաչողական կարողությունները:
- Բարձրացնել դպրոցից դուրս սովորողի շփման վստահությունը:
- Հարստացնել սովորողի օտարալեզվյան բառապաշարը:
- Ձևավորել ինքնուրույն բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողությունները:
- Զարգացնել ընթերցած նյութը վերլուծելու կարողությունը:
- Զարգացնել սովորողների բանավոր խոսքը՝ կարդացածը ստեղծագործաբար վերարտադրելու, քննարկելու, տարբեր թեմաներով զրույցներ անցկացնելու, երկխոսություններ կառուցելու միջոցով:
- Զարգացնել ընդհանուր խոսքային՝ խոսելու և լսելով հասկանալու, ինչպես նաև միջնորդավորված հաղորդակցման՝ ընթերցանության միջոցով օտար լեզվով նյութը հասկանալու և գրավոր խոսքին տիրապետելու հմտությունները:

Անգլերենի դասին ՏՀՏ գործիքների կիրառումը կարող է լուծել մի շարք ուսումնական խնդիրներ, օրինակ՝

1.Զարգացնել խոսքը: Սովորողները փոքրիկ ռադիոլուրեր են պատրաստում օտար լեզվով՝ հարցազրույցներ վերցնում սովորողներից և ուսուցիչներից:

2.Զարգացնել գրելու հմտությունները։ Սովորողները իրենց թարգմանություններն ու ստեղծագործությունները տեղադրում են իրենց բլոգներում։

3.Ընդլայնել բառապաշարը՝ ավելացնելով տարբեր դարձվածաբանական արտահայտություններ, ասացվացքներ և այլն։

4.Զարգացնել ընթերցման և ունկնդրման հմտությունները։

5.Զարգացնել սովորողի՝ իր գիտելիքներն ու հմտությունները կիրառելու կարողությունը։

6.Միջառարկայական կապ ստեղծել այլ առարկաների հետ /մայրենի, մաթեմատիկա, տեխնոլոգիա, երգ և այլն/ թարգմանությունների միջոցով։

ԳԼՈՒԽ 3. ՏՀՏ գործիքները՝ որպես ուսումնական գործընթացի արդյունավետությունը բարձրացնող միջոցներ

ՏՀՏ-գործիքներից լայնորեն կիրառվող տարբերակներից՝ տեղեկատվություն ներկայացնելու ամենահարմար և արդյունավետ եղանակներից մեկը, որը համատեղում է դինամիկան, ձայնն ու պատկերը, այսինքն՝ երեխայի ուշադրությունը ամենաերկար պահող գործոնը, մուլտիմեդիա շնորհանդեսն է:

Բացի դրանից շնորհանդեսը հնարավորություն է տալիս ուսուցչին ինքնուրույն կազմել ուսումնական նյութ՝ հիմնված որոշակի դասի, թեմայի, առարկայի բնութագրերի վրա, ինչը թույլ է տալիս դասը կազմակերպել այնպես, որ հասնի առավելագույն կրթական արդյունքի:

Այսօր գոյություն ունի բազմաթիվ կրթական կայքեր, ֆորումներ, հավելվածներ և ծրագրեր, որոնք հենց այդ նպատակին են ծառայում: Տարեցտարի ավելանում են դիդակտիկ նյութերը, որոնք ստեղծվել են ՏՀՏ-ների օգնությամբ: Այսպիսի առցանց ՏՀՏ գործիքներ են Quizzes-ը, Microsoft Forms-ը, Socrative-ը և այլն: Երբ աշակերտներն անցնում են այս թեստերը, դրանք վերլուծության են ենթարկվում: Այս կերպ կարելի է տեսնել, թե արդյոք նպատակները ձեռք են բերվել, որպեսզի առաջարկվեն գործողություններ կամ վարժություններ, որոնք պետք է վերանայվեն դասարանում: Դասարանում անգլերեն սովորելը շատ ավելի արդյունավետ է, երբ համալրվում է կրթական տեխնոլոգիաներով:

Հիմա բերեմ իմ անձնական օրինակներից: Միավորային գնահատում իրականացնելիս ինձ շատ է օգնում Quizizz առցանց գործիքը: Quizizz առցանց գործիքի օգնությամբ հնարավոր է իրականացնել սովորողների առցանց համաժամանակյա միավորային գնահատում: Գործիքն օգտագործելիս սովորողները պետք է իմանան համապատասխան հարցման մուտքի կոդը:

Սովորողները հարցադրումներին հետևելու են և պատասխանները նշելու են տիրույթին միացված ցանկացած գործիքի (հեռախոս, համակարգիչ, պլանշետ) օգնությամբ:

Հարցման ավարտին հնարավոր է MS Exel ֆորմատով ներբեռնել սովորողների միավորային գնահատականները:

Այս տիրույթում աշխատելիս գնահատվում է սովորողների կատարած առաջադրանքների և՛ արագությունը և՛ճշտությունը: Վարժություններ ստեղծելիս հնարավոր է կազմել հարցադրումներ բազմակի ընտրանք ձևաչափով: Հարցերի հաջորդականությունը խառնվում է համակարգի միջոցով:

Quizizz առցանց գործիքը հնարավորություն է տալիս իրականացնել հետևյալ աշխատանքները.

- միաժամանակ ստեղծել տարբեր թեմաներով և տարբեր քանակի հարցերից կազմված վարժություններ
- պատրաստի վարժությունները խմբագրել, պահպանել առցանց
- հետևել սովորողների առաջադիմությանն առցանց
- տարածել պատրաստի վարժությունները հղմամբ
- յուրաքանչյուր հարցի համար սահմանել ժամանակ
- հրապարակման համար ընտրել լեզուն և սահմանել հասանելիության աստիճանը:

Անգլերենի դասընթացներում շրջված դասարանի մեթոդը, դասերը վերածում են այնպիսի միջավայրի, որտեղ խրախուսվում են մտքերով կիսվելը, բանավիճելը, կարծիքներ ստեղծելն ու ձևավորելը: Արդյունքում ստեղծվում է մի տարածք, որը շատ ավելի ստեղծագործ և մասնակցային է:Վիրտուալ գրատախտակների միջոցով, ինչպիսին են Microsoft Whiteboard-ն ու Padlet-ը, սովորելը ավելի հեշտ է, սովորողները շատ ավելի

ներգրավված են, իսկ առցանց վարժությունները և ինտերակտիվ մուլտիմեդիայի կիրառումը նրանց համար մոտիվացնող են:

Սովորողները տանը նախապես ծանոթում են հաջորդ դասի նյութին.

1.Դիտում են տեսանյութը,

2.ուսումնասիրում են վիրտուալ գրատախտակը,

3.կատարում են տեսանյութի հետ զուգահեռ ներկայացված նախաթեստը, որի արդյունքները հայտնվում են ուսուցչի մոտ:

Այստեղ ամենակարևորը անմիջական արձագանքն է, որը հայտնվում է աշակերտի մոտ: Այն խրախուսում է նրանց, նրանք փորձում են թեստը կատարել այնքան ժամանակ, մինչև հասնեն առավելագույն միավորին:Արդեն դասարանում, ուսուցիչը հարցերի միջոցով, տեսանյութը ևս մեկ անգամ դիտելով վեր է հանում այն կետերը, որոնք աշակերտները դժվարացել են սովորել: Քննարկելուց հետո, աշակերտներն արդեն կատարում են ևս մեկ թեստային աշխատանք: Որպես կանոն 60% արդյունավետություն ցուցաբերած թեստը, շրջված դասարան մեթոդի կիրառումից հետո, բարձրանում է մինչև 90% և ավելի:

socrative

Socrative առցանց հարթակի հնարավորությունների օգտագործմամբ ստեղծված թեստ է, որը կարողանում ենք արտահանել և տպել, այսպիսով թեմատիկ աշխատանքները կարող ենք ստեղծել այս հարթակում՝ օգտագործելով առկա ուսումնական ռեսուրսները:

LearningApps.org

Սա լիովին անվճար առցանց ծառայություն է Գերմանիայից, որը թույլ է տալիս ստեղծել ինտերակտիվ վարժություններ ՝ գիտելիքները ստուգելու համար: Այն նախատեսված է ինտերակտիվ մոդուլներով ուսուցման գործընթացին աջակցելո համար:Կայքն ունի պատրաստի ինտերակտիվ վարժություններ նույնպես՝ համակարգված թե՛ ըստ թեմատիկ ոլորտների, թե՛տարբերակված ըստ տարիքի:

Kahoot-ը հանրաճանաչ ուսումնական հարթակ է վիկտորինաների, թեստային և ստուգողական վարժությունների և կրթական խաղերի ստեղծման համար: Kahoot-ը նպաստում է,ուսման գործընթացի մեջ ներգրավվմանը , նաև ինքնուրույն ուսուցմանը:

Տեխնոլոգիաների օգտագործումը անգլերեն լեզվի դասաժամին արդյունավետ գործիք է սովորողների համար: Սովորողները պետք է օգտագործեն տեխնոլոգիաները՝ որպես իրենց ուսումնական գործընթացի զգալի մաս: Ուսուցիչները պետք է մոդելավորեն տեխնոլոգիաների օգտագործումը ուսումնական ծրագրին աջակցելու համար, որպեսզի սովորողները կարողանան կարևորել տեխնոլոգիայի իրական օգտագործումը իրենց լեզվական հմտությունները կատարելագործելու համար (Costley, 2014; Murphy, DePasquale, & McNamara, 2003):

Սովորողների համագործակցությունը կարող է ընդլայնվել տեխնոլոգիայի միջոցով: Համագործակցությունը սովորելու կարևոր գործիքներից է: Սովորողները համագործակցում են՝ առաջադրանքներ ստեղծելու և միմյանցից սովորելու համար՝ կարդալով իրենց հասակակիցների աշխատանքը (Keser, Huseyin, & Ozdamli, 2011):

Այս առումով հարցումները հենց մեր դպրոցի շրջանակներում ցույց տվեցին, որ աշակերտներն ավելի սիրով են մասնակցում են այն դասերին, որոնց ընթացքում կիրառվում են տեղեկատվական տեխնոլոգիաներ, դա մոտիվացնում է նրանց:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերը նշված օրինակներից ու դասավանդման փորձից կարող ենք գալ եզրակացության,որ

1.Տեղեկատվական տեխնոլոգիաները թույլ են տալիս ուսուցիչներին ավելի արդյունավետ ու մատչելի մատուցել նյութը լսարանին թե՛ առկա, թե՛ հեռավար տարբերակով :

2.Այն անսահմանափակ ռեսուրսների դռներ է բացում ուսուցիչների առաջ և խթանում ուսուցիչ- աշակերտ համագործակցությունը:

3.Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման միջոցով ուսուցիչները ավելի են մոտիվացնում աշակերտներին և ինտերակտիվ ու գրավիչ դասավանդման նոր ձևերով՝ լրացնելով դասավանդման ավանդական մեթոդներին, ուժեղացնում են ուսուցման գործընթացի արդյունավետությունը:

4.Թվային տեխնոլոգիաները զարգացնում են ավելի լավ ուսուցիչ- սովորող հարաբերություններ

5. Անգլերենի դասին սովորողի համար պետք է ստողծել այնպիսի միջավայր, որտեղ նա իրեն պահանջված ու կարևոր կզգա և բաց կլինի համագործակցության ու կարծիքների փոխանակման, երկխոսության համար:

6. Ուսուցիչը պետք է ամեն կերպ փորձի համակարչային կախվածությունից զերծ պահի սովորողին՝ մշտադիտարկումներ իրականացնելով:

Տեղեկատվական տեխնոլոգիաները խրախուսում են սովորողներին սովորել անհատապես և ձեռք բերել պատասխանատու վարքագիծ՝ զարգացնել ավելի բարձր կարգի մտածողության հմտություններ:

Նրանք օգնում են սովորողներին լուծել իրենց ուսման դժվարությունները և գտնել մեթոդներ՝ օգտագործելու այն, ինչ սովորել են արդյունավետ և իմաստալից ձևերով:

Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը առանցքային դեր է խաղում լեզվի ուսուցման մեջ՝ սովորողների մոտ ստեղծելով բարձր մոտիվացիա՝ արդյունավետ սովորելու համար:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ տեղեկատվական տեխնոլոգիաններն ապահովում են անընդհատ փոխազդեցություն ուսուցիչների և սովորողների միջև, օգնում են սովորողներին զարգացնել մտածողության հմտությունները, ուսումն ու ուսուցումը դարձնում են ավելի աշակերտակենտրոն, նպաստում են սովորողների ինքնավարությանը և օգնում նրանց: Ամենակարևորը, մեծացնում են սովորողների մոտիվացիան՝ արդյունավետորեն անգլերեն սովորելու համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Ն. Մկրտչյան ,<<Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման կազմակերպումը դպրոցում>>:

2.Ն. Մանուկյան, «Անգլերենի դասավանդման որոշ մեթոդների շուրջ»:

3. Eaton, S. EGlobal trends in language learning in the twenty-first century. Calgary Canada: 2010. Onate Press.

4. https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք: